ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Սամվել Ավետիքյանի՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն կատարած այցի արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Սամվել Ավետիքյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Քաղաք Պեկին, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, 2017թ. նոյեմբերի 6-10-ը

4. Հրավիրող կողմը՝

ՀՀ-ում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության դեսպանություն, ՉԺՀ մաքսային ծառայություն:

5. Գործուղման նպատակը/ աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/՝

Աշխատանքային հանդիպումներ ՉԺՀ մաքսային ծառայության, չինական «Նուքտեք» ընկերության և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի պաշտոնատար անձանց միջև:

6. Քննարկված թեմաները՝

Ներկայումս իրականացման փուլում է գտնվում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի և չինական «Նուքտեք» ընկերության միջև մաքսային հսկողության տեխնոլոգիաների և սարքավորումների արդիականացման նախագիծը: Հանդիպումների ընթացքում քննարկվել են «Նուքտեք» ընկերության հետ համագործակցության ուղիներն ու ոլորտները, որն առաջատար տեղ է զբաղեցնում մաքսային համակարգի տեխնոլոգիաների բնագավառում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հանդիպումներ են տեղի ունեցել չինական «Նուքտեք» ընկերության ղեկավարության հետ, ընկերության փոխնախագահ Վանգ Վեիդոնգի և ԱՊՀ տարածաշրջանի նախագահ

Յանգ Բոի հետ, ինչպես նաև Չինաստանի մաքսային ծառայության տեղեկատվական կենտրոնի ղեկավարության հետ: Լսվել են տարբեր ելույթներ, ծանոթացել կենտրոնի հնարավորություններին, կենտրոնի առջև դրված խնդիրներին և լուծմանն ուղղված մոտեցումներին: Ուսումնասիրվել են Չինաստանի մաքսային ստորաբաժանումների ստուգման և զննման սարքավորումների աշխատանքները, նորտեխնիկայի մոդելները, նրանց տեխնիկական բնութագրերը: Նոր տեխնիկայի ցանկում էին ինչպես ռենտգենյան սարքավորումներ՝ բեռների և ֆիզիկական անձանց զննման համար, այնպես էլ նյութերի տարբեր անալիզատորներ (թմրամիջոցների, պայթուցիկ նյութերի և այլն): Այցելություն է եղել նաև չինական ափից հեռու 32 կմ հեռավորությամբ խաղաղօվկիանոսյան կղզու վրա գործող Յանշանգան խոշոր մաքսային տերմինալ և ուսումնասիրվել ողջ տերմինալի ավտոմատացված համակարգի աշխատանքը (բեռնում, բեռնաթափում, տեղափոխում և այլն):

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Այցելություններ են եղել խաղաղօվկիանոսյան Քսին Գանգ նավահանգստում գտնվող Տիանգին մաքսային կետ: Հանդիպումներ են տեղի ունեցել մաքսային կետի և զննման ստորաբաժանման ղեկավարության հետ: Ուսումնասիրվել է մաքսային կետում շահագործվող ռենտգենյան սարքերի աշխատանքը, աշխատանքի կազմակերպումն ու հսկողության իրականացումը: Ուսումնասիրվել է բեռների ռենտգենյան սկանավորումից ստացված պատկերների՝ կենտրոնում վերլուծման փորձը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հանդիպման որոշումները և առաջարկությունները կարտացոլվեն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատանքային ծրագրերում:

10. Գործուղվողը՝

Սամվել Ավետիքյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը

13.11.2017թ.